

Կ-070-14.07.2017-SSԳԲ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 3-րդ մասը «Երեւանը» բառից հետո լրացնել «հանրային իրավունքի» բառերով:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը «սույն օրենքով» բառերից հետո լրացնել «եւ այլ օրենքներով» բառերը:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմին» բառերով.

2) լրացնել 3-րդ մաս,

«3. Երեւանում տարածքային կառավարման առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով»:

Հոդված 4. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 22-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«22) քաղաքապետի կամ ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ, ավագանու անդամների ձայների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ նշանակում է տեղական հանրաքվե.»,

2) 36-րդ կետը «քաղաքապետի առաջարկությամբ սահմանում է» բառերից հետո լրացնել «քաղաքապետին եւ» բառերը:

3) լրացնել 37-րդ կետով.

«37) քաղաքապետի ներկայացմամբ որոշում է կամավոր խնդիրների լուծման նպատակով սահմանված սեփական լիազորությունների իրականացման կարգը եւ անհրաժեշտ ֆինանսական միջոցները»:

Հոդված 5. Օրենքի 12-րդ եւ 53-րդ հոդվածների 1-ին մասերում, 83-րդ հոդվածի 2-րդ մասում «քառամյա» բառը փոխարինել «հինգամյա» բառով:

Հոդված 6. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը «դադարեցման» բառից հետո լրացնել «կամ դադարման» բառերը:

Հոդված 7. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի «չորս» բառը փոխարինել «հինգ» բառով:

Հոդված 8. Օրենքի 20-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 20. Ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, դադարումը

1. Ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են, եթե՝
 - 1) դադարել են ավագանու լիազորությունները.
 - 2) նա կորցրել է համայնքի ավագանու ընտրական իրավունքը.
 - 3) դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով նա անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած է ճանաչվել.
 - 4) նա ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոն զբաղեցնելու վերաբերյալ դիմում է ներկայացրել.
 - 5) նա ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոն զբաղեցնելու պահից մեկ շաբաթվա ընթացքում այդ մասին գրավոր չի տեղեկացրել քաղաքապետին.

6) նա հրաժարական է տվել:

2. Ավագանու անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ, եթե նա մեկ հերթական նստաշրջանի ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է ավագանու նիստերի կամ քվեարկությունների ավելի քան կեսից կամ հանձնաժողովի նիստերի կեսից:

3. Ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են, եթե նա մահացել է:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում՝ բացառությամբ 1-ին կետով նախատեսված դեպքի, համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա, քաղաքապետի կողմից կազմվում է ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին արձանագրություն եւ յոթ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում կենտրոնական ընտրական հանձնաժողով:

5. Ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումը անձամբ ներկայացնում է քաղաքապետին, որն այն հրապարակում է ավագանու առաջիկա նիստում: Ավագանու անդամի կողմից իր դիմումն անձամբ քաղաքապետին ներկայացնելու անհնարինության դեպքում հրաժարականի դիմումը ներկայացվում է խմբակցության ղեկավարի կամ ավագանու անդամի ներկայացուցչի կողմից:»:

Հոդված 9. Օրենքի 22-րդ հոդվածում լրացնել 1.1-րդ մաս.

«1.1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության եւ օրենքների հիման վրա եւ դրանց իրականացումն ապահովելու նպատակով՝ ավագանին օրենքով սահմանված կարգով ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, որոնք ենթակա են կատարման Երեւանի վարչական տարածքում:»:

Հոդված 10. Օրենքի 27-րդ հոդվածում լրացնել նոր 1.1-ին մաս«1.1 Քաղաքապետի որոշմամբ անհետաձգելի համարվող ավագանու իրավական ակտերի նախագծերը առաջիկա նիստի օրակարգում ընդգրկվելու համար կարող են ներկայացվել նիստից առնվազն 2 օր առաջ»:

Հոդված 11. Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Նորընտիր ավագանու առաջին նիստը օրենքի ուժով գումարվում է ավագանու անդամների ընտրվելու վերաբերյալ որոշման պաշտոնական հրապարակումից հետո՝ նախորդ ավագանու լիազորությունների ժամկետի ավարտման օրը»:

Հոդված 12. Օրենքի 31-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասում «խմբակցության ղեկավարին» բառերից հետո լրացնել «եւ քաղաքապետին» բառերով.

2) 4-րդ մասից հանել «,եւ վերականգնվում է, եթե նրա կազմում ընդգրկվում է դրա իրավասությունն ունեցող ավագանու առնվազն մեկ անդամ» բառերը:

Հոդված 13. Օրենքի 33-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասը լրացնել նոր պարբերությամբ.

«Հավասար՝ ամենամեծ գործակիցների դեպքում մշտական հանձնաժողովի նախագահի կամ տեղակալի հերթական պաշտոնում թեկնածուի առաջադրելու իրավունքը որոշվում է հավասար գործակիցներ ունեցող խմբակցությունների փոխհամաձայնությամբ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ վիճակահանությամբ: Եթե խմբակցությունը չի առաջադրում մշտական հանձնաժողովի նախագահի եւ (կամ) տեղակալի թեկնածու, ապա տվյալ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքն անցնում է խմբակցությունների գործակիցների հաշվարկի սկզբում ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությանը».

2) 8-րդ մասը «համապատասխան խմբակցությունը» բառերից հետո լրացնել «իսկ դրա անհնարինության դեպքում՝ հարցը լուծվում է ավագանու անդամի դիմումի հիման վրա» բառերը:

Հոդված 14. Օրենքի 45-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 45. Քաղաքապետի լիազորությունների դադարումը, դադարեցումը

1. Քաղաքապետի լիազորությունները դադարում են նորընտիր քաղաքապետի կողմից լիազորությունները ստանձնելու պահից:

2. Քաղաքապետի լիազորությունները վաղաժամկետ դադարում են, եթե նա՝

1) կորցրել է ավագանու անդամի ընտրական իրավունքը.

2) քաղաքապետի պաշտոնի հետ անհամատեղելի պաշտոն է զբաղեցնում.

3) հրաժարական է տվել.

4) կորցրել է ավագանու անդամի լիազորությունը.

5) ստացել է այլ երկրի քաղաքացիություն.

6) մահացել է:

3. Քաղաքապետի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են սույն օրենքի 40-րդ հոդվածով սահմանված կարգով անվստահություն հայտնելու դեպքում.

4. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում, բացառությամբ 6-րդ կետով սահմանված դեպքի՝ ավագանին կազմում է քաղաքապետի լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին արձանագրություն:

5. Քաղաքապետի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, նույն անձը չի կարող առաջադրվել քաղաքապետ»:

Հոդված 15. Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Քաղաքապետի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երրորդ աշխատանքային օրը՝ ժամը 10.00-ին, օրենքի ուժով հրավիրվում է ավագանու նիստ, որում որոշվում է քաղաքապետի արտահերթ ընտրության օրը, ընդ որում՝ քաղաքապետի պաշտոնը թափուր մնալուց հետո քաղաքապետի արտահերթ ընտրությունները անցկացվում են

ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում՝ քաղաքապետի ընտրությունների համար սահմանված կարգով:»:

Հոդված 16. Օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) «պարտադիր» բառերը փոխարինել «սեփական» բառերով.

2) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. կազմակերպում է ավագանու աշխատանքները, կատարում է ավագանու որոշումները, իրականացնում է քաղաքապետարանի աշխատակազմի ընդհանուր ղեկավարումը.».

3) 3-րդ կետը «կառուցվածքային» բառից հետո լրացնել «եւ առանձնացված» բառերը.

4) 4-րդ կետը «շինությունների» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ հողամասերի» բառերը.

5) լրացնել նոր 6.1-ին կետով հետևյալ բովանդակությամբ.

«6.1) որոշում է ընդունում Երեւանի ենթակայության կազմակերպությունների կառուցվածքի, աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի եւ պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ.».

6) 14-րդ կետը «առաջարկություն» բառից հետո լրացնել «քաղաքապետին եւ» բառերը.

7) 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15) բացառապես սույն օրենքով եւ այլ օրենքներով սահմանված այլ իրավասություններ:»

Հոդված 17. Օրենքի 53-րդ, 54-րդ, 55-րդ, 56-րդ, 57-րդ, 59-րդ, 60-րդ, 61-րդ, 62-րդ, 63-րդ, 64-րդ, 66-րդ, 67-րդ, 68-րդ հոդվածների 1-ին մասերում «պարտադիր լիազորություններ» բառերը փոխարինել «սեփական լիազորություններ» բառերով:

Հոդված 18. Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը ձանաչել ուժը կորցրած:

Հոդված 19. Օրենքի 56.1-ին հոդվածի վերնագրում, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ մասերում «համայնքի ղեկավար» բառերը փոխարինել «քաղաքապետ» բառով:

Հոդված 20. Օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը ձանաչել ուժը կորցրած:

Հոդված 21. Օրենքի 64-րդ հոդվածի վերնագրում եւ 1-ին մասի առաջին պարբերությունում՝ «բնապահպանության» բառը փոխարինել «շրջակա միջավայրի պահպանության» բառերով:

Հոդված 22. Օրենքի 66-րդ հոդվածի՝

1) վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ. «Քաղաքապետի լիազորությունները արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության եւ քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բնագավառում».

2) 1-ին մասում «քաղաքացիական պաշտպանության բնագավառում եւ արտակարգ իրավիճակներում» բառերը փոխարինել «արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության եւ քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բնագավառում» բառերով:

Հոդված 23. Օրենքի 68-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ձանաչել:

Հոդված 24. Օրենքի 69-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 69. Քաղաքապետի՝ համայնքի կամավոր խնդիրների լուծմանն ուղղված լիազորությունները

«1. Քաղաքապետը, սույն օրենքով սահմանված սեփական եւ պետության պատվիրակած լիազորություններից բացի, օժտված է նաեւ ավագանու կողմից սահմանված կամավոր խնդիրների լուծմանն ուղղված լիազորություններով:

2. Համայնքի կամավոր խնդիրները սահմանում է համայնքի ավագանին:»

Հոդված 25. Օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի «քաղաքապետի կամավոր լիազորությունների» բառերը փոխարինել «համայնքի կամավոր խնդիրների լուծման նպատակով սահմանված լիազորությունների» բառերով:

Հոդված 26. Օրենքի 74-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերում «պարտադիր եւ կամավոր» բառերը փոխարինել «սեփական» բառերով:

Հոդված 27. Օրենքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «23.00» թիվը փոխարինել «24.00» թվով:

Հոդված 28. Օրենքի 102-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր պարբերությամբ.

«Վարչական շրջանի ղեկավարի կողմից ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու անհնարինության դեպքում, վարչական շրջանի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակում քաղաքապետը:»:

Հոդված 29. Օրենքի 105-րդ հոդվածի՝

1) 1-ին, 3-րդ եւ 4-րդ մասերում «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն» բառերը փոխարինել «տարածքային կառավարման բնագավառի պետական լիազորված մարմին» բառերով.

2) 6-րդ մասում «օրենքի» բառը փոխարինել «օրենքով» բառով եւ հանել «77.3-րդ-77.5-րդ հոդվածներով» բառերը:

Հոդված 30. Օրենքի 113-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 31. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը
1	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մաս, 4-րդ հոդվածի 3-րդ մաս, 9-րդ հոդված, 10-րդ հոդված, 13-րդ հոդվածի 1-ին մաս և 28-րդ հոդված	Նշվածում առաջարկում ենք «հետևյալ բովանդակությամբ» բառերը հանել,	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն
2	ՀՀ կառավարություն	Նախագծի 8-րդ, 11-րդ, 14-15-րդ հոդվածներ, 22-րդ հոդվածի 1-ին մաս և 24-րդ հոդված	առաջարկում ենք «հետևյալ» բառը փոխարինել «նոր» բառով	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն
3	ՀՀ կառավարություն	Նախագծի 17-րդ հոդված	Հոդվածով առաջարկվում է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 54-րդ, 55-րդ, 56-րդ, 57-րդ, 59-րդ, 60-րդ, 61-րդ, 62-րդ, 63-րդ, 64-րդ, 66-րդ, 67-րդ, 68-րդ հոդվածների 1-ին մասերում «պարտադիր» բառը փոխարինել «սեփական» բառով: Նպատակը «պարտադիր լիազորություններ» արտահայտությունը և դրա հոլովածները «սեփական լրազորություններ» արտահայտությամբ և դրա հոլովածներով փոխարինելն է: Այս համատեքստում նշված ցանկից պետք է բացառություն կազմի «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածի	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն

			1-ին մասի 3-րդ կետի «պարտադիր» բառը, քանի որ այս դեպքում խոսքը վերաբերում է պարտադիր նորմերին:	
	« կառավարություն	Նախագծի 30-րդ հոդված	Քանի որ շահագրգիռ պետական մարմինների քննարկմանն է ուղարկվել երկրորդ ընթերցմամբ քննարկման դրված տարբերակը (30-րդ հոդվածի ներառմամբ) և այդ հոդվածը տեխնիկական պատճառներով դուրս էր մնացել առաջին ընթերցման տարբերակից՝ առաջարկվում է 30-րդ հոդվածը վերականգնել:	Ընդունվել է, առաջարկվող լրացումը կատարվել է